

# Է Թ Ա Ւ Թ Ի Ւ Կ Ն

(Հ. Անդրեասի)

## I

Մայիսեան մի լուսնեակ երեկոյ, երբ սոխակները  
երգում էին դուրսը, հ. Խգնատիոսի առանձնասենեակը  
մտաւ նորա ամուսինը: Վերջնիս դէմքը արտայատում  
էր տանջանք, իսկ փոքրիկ լամպարը գողում էր նորա  
ձեռքին: Մօտենալով ամուսնուն, թողթուեց կամացուկ  
նորա ուսը և, լացակումած, ասաց.

— Գնանք, Տէր-բարա, Վէրոչկայի մօտ:

Առանց գլուխը լետ դարձնելու, հ. Խգնատիոսը  
ակնոցների վրալից ունքամիջով նալեց երիցուհուն, և նա-  
լեց երկար ու լառած, մինչև որ կինը ազատ ձեռքով  
մի լուսահատ շարժում չարեց և չնատեց ցածրիկ գա-  
հաւորակի վրալ:

— Որչափ՝ երկուսդ էլ... անգութ էք, — արտասա-  
նեց երիցուհին լամբար, զօրեղ շեշտելով վերջին  
վանկերը, և նորա բարի, լիքը դէմքը խեղուեցաւ ցա-  
ւի և քարսիրտ վերաբերմունքի արտայալտութիւնից,  
կարծես դիմագծերով կամենալով հոյց տալ, թէ ինչպի-  
սի դաժան արարածներ են՝ իւր ամուսինն ու աղջիկը:

Հ. Խգնատիոսը քմծիծաղ տուեց և ելաւ: Գոցե-  
լով գիրքը, վերցրեց ակնոցները, դրեց ամանի մէջ և  
մտածութեան մէջ ընկաւ: Մեծ, փառաւոր, ու միրուքը,  
որի մէջ արդէն արծաթթելեր էին հիւսուել, գեղե-  
ցիկ ծալքերով ընկած էր նորա կրծքին և կամացուկ  
վեր ու վար էր լինում խոր շունչ քաշելու ժամանակ:

— Ե՛, գնանք, ասաց նա:

Օլգա Ստեպանովնան արագ ելաւ և անհամարձակ, աղերսող ձայնով խնդրեց.

— Միայն չտանդիմանես նորան, տէր-տէր ջան: Դու գիտես թէ ինչպէս...

Վէրալի սենեակը գտնուում էր միջալարկում և նեղ-լիկ, փալտէ սանդուղքը ճկուում և հեծում էր հ. Խզնատիսի ծանր քալերի տակ, Բարձրահասակ էր և լիքրիք, ուստի և գլուխը կռացնում էր, որպէս զի վերին լարկի լատակին չզարնուի և տհաճութեամբ խոժուում էր դէմքը, երբ կնոջ սպիտակ վերնազգեստը թեթեակի կպչում էր երեսին: Նա գիտէր, որ ոչինչ չի դուրս գալ Վէրալի հետ ունեցած խօսակցութիւնից:

— Ի՞նչ կայ, — հարցրեց Վէրան, բաց թևերից մէկը տանելով աչքերին: Միւս թեր ընկած էր ամառալին սպիտակ վերմակի վրայ և, համարեա, չէր զանազանում նորանից, մինչ այն ասակճան դժգուն, թափանցիկ և սառն էր:

— Վէրօչկա... — սկսեց մալրը, բայց հեծկլտաց և լոեց:

— Վէրա, — ասաց հալը, աշխատելով մեղմացնել իւր դաժան ու կոշտ ձայնը: — Վէրա, պատմիր, ասամեզ, ինչ ունիս, ինչ է պատահել քեզ:

Վէրան լուռ էր:

— Վէրա, միթէ մենք՝ ես և մալրդ, արժանի չենք քո վստահութեան: Միթէ մենք չենք սիրում քեզ: Եւ միթէ մեզնից առաւել մօտիկ մէկն ունիս: Ասա մեզ քո վիշտը և, հաւատա ինձ, փորձուած և ծերացածիս, որ թեթեսութիւն կզգաս: Միւս կողմից՝ մենք էլ կսփոփուենք: Նալիք, տես, ինչպէս է տանջուում պառաւ մալրդ...

— Վէրօչկա...

— Իսկ ինձ համար... — դաժան ձայնը դողաց, կարծես մի բան կոտրուեց նորա մէջ. — ինձ համար, կարծում ես, հեշտ է: Միթէ դու կարծում ես, որ չեմ տեսնում, թէ ինչպէս մի ինչ որ վիշտ կրծում, սպանում է քեզ... Բայց թէ ինչ վիշտ: Եւ ես, քո հալրդ, չգիտեմ այդ: Միթէ ալդպէս պիտի լինի:

Վէրան լուռ էր: Հ. Խզնատիսուը մի առանձին զգու-

շութեամբ շփեց մօրուսը, կարծես, վախենալով, որ հակառակ իւր կամքի մատները ամուր կվարսուի նորամէջ, և շարունակեց.

— Հակառակ իմ կամքի Պետերբուրգ գնացիր. միթէ անիծեցի քեզ՝ իմ խօսքս չլսողին: Եւ կամ դրամ չտուի: Եւ կամ, կասես, չէ՞ գուրգուրում, փաղաքշում: Ե՛ բնչ ես լուել, Ահա, դա էլ քո Պետերբուրգդ:

Հ. Իգնատիոսը լսեց և նորա առաջ պատկերացաւ ինչ որ վիթխարի, որձաքարերի մէջ պարփակուած բան, լի անյալտ, անակնունելի վտանգներով և բոլորովին օտար, անկարեկից մարդիկներով: Եւ ալդտեղ՝ իւր միտրնակ, թոյլ Վէրան. և ալդտեղ դժբաղդացրին, կործանեցին նորան: Մի չար ատելութիւն բարձրացաւ հ. Իգնատիոսի կրծքում դէպի ալդ զարհուրելի, անըմբըռնելի առեղծուած քաղաքը և նոյնպիսի բարկութիւն գէպի իւր աղջիկը որ լուում էր, յամառ լուութիւն էր պահպանում:

— Պետերբուրգն ալստեղ ոչ մի մեղք չունի, թախծալից ասաց Վէրան և աչքերը փակեց: — Իսկ ինձ ոչինչ չի պատահել: Աւելի լաւ է, գնացէք քնելու. ուշ է:

— Վէրօչկա, — հծաց մալրը: — Զաւակս, բաց սիրտ իմ առաջ:

— Ա. խ, մալրիկ, — անհամբերութեամբ կտրեց նորա խօսքը Վէրան:

Հ. Իգնատիոսը նստեց աթոռի վրայ և ծիծաղեց:

— Ալգակս էլի՛, ուրեմն ոչինչ չի պատահել, — հեգնօրէն հարցրեց նա:

— Հայր, կծու վրայ բերեց Վէրան, անկողնում նստելով, — գիտես, որ սիրում եմ թէ քեզ և թէ մալրիկին: Բայց... է, մի փոքր ձանձրանում եմ, ուրիշ ոչինչ: Կանցնի այս բոլորը՝ կերթայ: Աւելի լաւ է, ճըշմարիտ, գնացէք քնեցէք, ես էլ եմ կամենում քնել: Իսկ վաղը կամ մի այլ անդամ — կխօսենք:

Հ. Իգնատիոսը թափով վեր կացաւ տեղից, այնպէս որ աթոռը պատին զարկուեցաւ և կնոշ ձեռքից քռնեց.

— Գնանք:

— Վէրօչկա...

—Դնանք, ասում եմ քեզ, գոչեց հ. Իգնատիոսը՝  
Եթէ նա Աստուած էլ է մոռացել, էլ մենք ինչ ենք...  
էլ ինչ ենք մենք:

Համարեա զոռով դուրս տարաւ ամուսնուն և, երբ  
սանդուղաներից իշնում էին, Օրդա Ստեպանովնան, քայ-  
լերը դանդաղեցնելով, թունալից շնչոցով ասում էր.

—Ու—ու... Դու, դու ես ալդակս դարձրել նո-  
րան: Քեզնից է սովորել, քեզնից է վերցրել այդ սովո-  
րութիւնը: Դու էլ պատասխանատու կլինիս... Այս, ես  
դժբաղդ արարածս...

Եւ նա սկսեց լալ, յաճախ կլոցելով տչքերը, աս-  
տիճանները չտեսնելով և ոտքն այնպէս փոխելով, որ  
կարծես, ներքեւ անդունդ էր բացուել և ինքը մէջը պի-  
տի գլորուէր:

Այդ օրուանից հ. Իգնատիոսը բոլորովին դադարեց  
աղջկալ հետ խօսելուց, իսկ նա իբր չէր էլ նկատում  
ալդ: Առաջուայ նման կամ սպառկում էր իւր սենեա-  
կում, կամ ման էր գալիս, իսկ յաճախ, շատ յաճախ  
ափերով աչքերն էր արորում, կարծես մէջը բան ըն-  
կած լինէր: Եւ այս երկու լուսութիւն պահպանող անձ-  
նաւորութիւնների մէջ, հանաք ու ծիծաղ սիրող երի-  
ցուհին ինքն իրեն կօրցրել և կծկուել էր, չիմանալով  
ինչ անէ կամ ինչ խօսի:

Երբեմն Վէրան զբօսնելու էր ելնում: Խօսակցու-  
թիւնից մի շաբաթ անց, նա ըստ սովորականին՝ երե-  
կոյեան գուրս գնաց: Ալ ևս նորան կենդանի չժեսան,  
որովհետեւ նոյն երեկոյեան ինքն իրեն գնացքի տակը  
ձգեց և գնացքը միշից կէս արեց նորան:

Թաղեց նորան ինքը՝ հ. Իգնատիոսը: Երկցուհին  
եկեղեցում չէր, որովհետեւ աղջկալ մահուան լուրն առ-  
նելուն պէս կտթուածահար էր եղել: Նա զրկուել էր  
ոտքերը, ձեռները և լեզուն շարժելու ընդունակութիւ-  
նից և անշարժ պառկած էր կիսախաւար սենեակում,  
այն ինչ կողքին՝ զանգակատնից զանգակները դողան-  
ջում էին: Նա լսում էր թէ ինչպէս ամենքն ելան ե-  
կեղեցուց, ինչպէս երգիչները երգում էին իրենց տան  
առաջ և աշխատում էր ձեռքը բարձրացնել՝ երեսը խա-  
շակնքելու համար, բայց բազուկը չէր հնազանդում. կա-

մենում էր ասել՝ «գնաս բարեաւ, Վէրտ, —բալց լեզուն իբրև մի ծանը ու ահագին բան ընկած էր բերնի մէջ։ Եւ նորա դիրքն ալնքան հանգիստ էր ու անվրդով, որ նալողը կասէր, թէ ալդ մարդը քնած է կամ հանգստանում է։ Միայն աչքերն էին բաց։

Եկեղեցում՝ յուղարկաւորութեանը մեծ բազմութիւն կար, հ. Իգնատիոսի ծանօթներից և անծանօթների իսկ և ամենքն ևս խղճում էին Վէրալին, որ ալդպիսի սարսափելի մահով վախճանուեցաւ, և աշխատում էին հ. Իգնատիոսի շարժումների և ձայնի մէջ ծանը վշտի նշաններ գտնել։ Նոքա չէին սիրում հ. Իգնատիոսին, որովհետեւ նա վարուելու եղանակի մէջ դաժան էր և գոռոզ, ատում էր մեղսակիրներին և չէր ներում նոցա, իսկ ինքը միւսնոյն ժամանակ, նախանձու և ազահ, ամեն մի յարմար առթից օգտուում էր, որպէս զի ծխականներից աւելի պոկէ։ Եւ ամենքն էլ կամենում էին տեսնել թէ ինչպէս է տանջւում նա, կոտրուել և զգում, որ կրկնակի մեղաւոր է աղջկալ մահուան պատճառով՝ իբր դաժան հալլը և վատ քահանալ, որ իւր արիւնն իսկ չկարողացաւ հեռու պահել մեղքից։ Եւ ամենքն էլ փորձէ հայեացքով գիտում էին նորան. իսկ նա, զգալով իւր թիկունքին յառած բազմաթիւ հայեացքները, աշխատում էր ալդ յալն ու ամուր թիկունքն ուղղել, և մտածում էր ոչ թէ մեռած աղջկալ մասին, այլ թէ ինչպէս անէ, որ իւր վարկը բարձր պահէր և չկոտրուէր։

— Բոլից ելած, մխուած քահանալ է, — ասաց, գըլշով ցոլց տալով նորան մի հիւսն, որին նա չէր տուել շրջանակների վարձ հինգ ըուբլին։

Եւ ալդպէս, ուղղաձիգ և հաստատ քալլերով, հ. Իգնատիոսը գնաց մինչև գերեզմանատուն և նոյն տեսակ էլ տուն դարձաւ։ Բայց միայն ամուսնու սենեակի շէմքում մի փոքր թեքուեցու նրա մէջքը. բայց ալդ էլ կարող էր առաջ գալ նորանից, որ դուների մեծ մասը ցածր էր նորա հասակի համար։ Աւելի լոյս տեղից մտնելով սենեակ, դժուարութեամբ կարողացաւ տեսնել կնոջ դէմքը, իսկ երբ տեսաւ, զարմացաւ, որ դիմագծերը բոլորովին հանգիստ են, իսկ աչքերում արցունք չկար։ Աչքերում նոյն իսկ վշտի կամ բարկու-

թեան արտայաւառթիւն չկար,—նոքա, կարծես, համ-  
րացել էին և լոել՝ ծանր, լամառ լոռութեամբ, ինչպէս  
և նորա, բմբուլների մէջ կորած, պարարտացած և ան-  
զօր մարմինը:

—Ե՛, ինչպէս ես զգում քեզ,—հարցրեց հ. Իգ-  
նատիսոսը:

Բայց զբթունքներն անխօս էին. լուռ էին և աչ-  
քերը. Հ, Իգնատիսոսը ձեռքը նորա ճակատին դրեց, որու-  
սառը և տամուկ էր և երիցուհին ոչ մի բանով չար-  
տալալտեց, որ զգաց ձեռքի հպումը: Եւ երբ հ. Իգնա-  
տիսոսը ձեռքը վերցրեց, ապա նրա վրայ յառած, առանց  
թերթելու նալում էին երկու գորշագույն խոր աչքեր, որ  
բոլորովին սև գոյն էին ստացել լայնացած բբերի պատճա-  
ռով, իսկ նոցա մէջ ոչ վիշտ և ոչ բարկութիւն էր ար-  
տալալտւում:

—Ե՛, ես իմ սենեակս կերթամ,—ասաց հ. Իգնա-  
տիսոսը, որին պատել էր երկիւղն ու սառսռոցը:

Անցաւ ընդունարանը, ուր ամեն ինչ մաքուր և  
սարգին էր, ինչպէս և միշտ. իսկ բարձրաթիկունք սպի-  
տակերես քաշած բազկաթիունները սաւանների մէջ փա-  
թաթուած մեռելների էին նմանում: Լուսամուտներից  
մէկում կախուած էր լաբերից հիւսուած վանդակը, որի  
դռնակը բաց էր և վանդակը դատարկ:

—Նաստասիա, — գոռաց հ. Իգնատիսոսը և իւր ձալնն  
էլ իրեն կոշտ թուաց և մի փոքր անլարմար զգաց, որ  
ալդպէս բարձրածալին գոռում է ալդ խաղաղ սենեակնե-  
րում, հէնց իւր աղջկայ թաղումից անմիջապէս յետոյ:—  
—Նաստասիա, կամացուկ հարցրեց նա, —ուր է դեղ-  
ձանիկը:

Խոհարարուհին, որ ալնքան էր լաց եղել, որ քիթն  
ուռել և կարմրել էր կարմիր ճակնդեղի պէս, կոշտ-  
կոշտ պատասխանեց.

—Հասկանալի է, թէ որտեղ է: Թռել գնացել է:

—Ինչո՞ւ արձակեցիր,—լոնքերը խոժոռած, սպառ-  
նալից հարցրեց հ. Իգնատիսոսը:

Աղախինը նորից լացակրկնեց և, գլխի չմէջ ծած-  
կոցի ծալրով աչքերը սրբելով, լալով ասաց.

— Խեղճը... օրիորդի հոգին էր... Միթէ կարելի էր  
պահել:

Եւ հ. Իգնատիոսին ալնպէս թուաց, թէ դեղնա-  
ւուն ուրախ դեղձանիկը, որ միշտ երգում էր գլուխը  
վար թեքած, լիրաւի Վէրալի հոգին էր և որ, եթէ  
նա չժռչէր-գնար, ապա չէր կարելի ասել, թէ Վէրան  
մեռել էր: Եւ նա աւելի ևս բարկացաւ խոհարարուհու  
վրայ և գոչեց.

— Դուքս,— և երբ աղախինը դուքս գնալու ժամա-  
նակ մի անգամից չկարողացաւ դուքս գտնել, աւելաց-  
քեց, — լիմար:

## II

Թաղման օրից փոքրիկ տնակում լրութիւնը տի-  
բեց: Անդորրութիւն չէր ալդ, որովհետև անդորրու-  
թիւնը — միայն ձայների բացակալութիւն է. այլ դա լրու-  
թիւն էր, երբ նոքա, որոնք լրում են, կարծես, կա-  
րող էին խօսել, բայց չեն կամենում: Ալդպէս էր մտա-  
ծում հ. Իգնատիոսը: Երբ մտնում էր ամուսնու սե-  
նեակը և հանդիպում մի լսմառ հայեացքի, այնչափ  
ծանը, որ կարծես ամբողջ օդը միապաղադ արճին էր  
զարձել և ճնշում էր նորա գլուխն ու թիկունքը իւր  
ծանրութեամբ: Ալպէս էր մտածում նա, երբ դիտում  
էր աղջկալ նօտաները, որոնց մէջ տպաւորուել — մնա-  
ցել էր նորա ձայնը, երբ դիտում էր նորա գրքերը և  
նկարը՝ մեծադիր, իւղաներկ նկար, որ իւր հետ բերել  
էր Պետերբուրգից: Պատկերը դիտելու մէջ հ. Իգնա-  
տիոսը որոշ կարգաւորութիւն էր մտցրել. նախ դիտում  
էր նորա այտը, որ աւելի լուսաւորուած էր նկարի մէջ  
և պատկերացնում էր այն քերծուածը, որ կար Վէրա-  
լի մահացած այտի վրայ և որի առաջ գալու պատճառը  
չէր կարողանում ըմբռնել: Եւ իւրաքանչիւր անդամ  
խոր մտածողութեան մէջ էր ընկնում ալդ պատճառ-  
ների առթիւ, — եթէ գնացքն էր կպել, ապա ամբողջ  
գանգը ջախջախուած կլինէր, ալն հնչ մեռած Վէրալի  
գլուխը բոլորովին անվնաս էր մնացել:

Դուցէ, դիակը վերցնելու ժամանակ, մէկը ոտքով կամ թէ պատահաբար եղունգով դիպել էր:

Բայց երկար մտածել Վերալի մահուան մանրամասնութիւնների վրայ զարհուրելի էր, ուստի և հ. Իգնատիոսը անցնում էր նկարի աչքերին, Դոքա սև էին, գեղեցիկ, երկար արտևանունքներով, որից և երկար շուաք էր ընկած ներքեւ, որից և սպիտակուցները մի առանձին փալլ էին ստացել և երկու աչքն էլ, կարծես, պարփակուած էին սևապատ, սգոյ շրջանակի մէջ. Օտարոտի արտայալտութիւն էր տուել նոցա անլայտ, բայց տաղանդաւոր, նկարիչը. ալնպէս էր թւում, որ իբրև թէ աչքերի և այն կէտի մէջ, ուր յառած էին աչքերը, մի նուրբ, թափանցկէն խաւ էր ձգուած: Մի քիչ նմանում էր դաշնակի սև խուփի, ամառնալին մանրամազ փոշու հազիւ նկատելի կտպած շերտի, որը մեղմում է փայտին տուած փալլն ու ցոլքը: Եւ ինչպէս էլ որ չէր տեղաւորում նկարը, աչքերը շարունակ հետևում էին նորան, բայց ոչինչ չէին ասում, լուս էին. և ալդ լուսւթիւնն այն աստիճան որոշակի, պարզ էր, որ կարծես, կարելի էր լըսել Եւ հետզհետէ հ. Իգնատիոսն սկսեց երեակալել, որ ինքը լսում է ալդ լուսւթիւնը:

Իւրաքանչիւր առաւօտը, պատարագից լետոլ, հ. Իգնատիոսը գալիս էր ընդունարան, մի հայեացքով ղիտում էր գատարկ վանդակը և սենեակի բոլոր ծանօթկահ կարասին, նստում էր բազկաթոռի մէջ, աչքերը փակում և լսում, թէ ինչպէս է լուս տունը: Ինչ որ տարօրինակ բան էր ալդ: Վանդակը լուս էր հանդարտ և հազիկ և ալդ լուսւթեան մէջ վիշտ ու արցունք և հետաւոր, մահացած ծիծաղ էր զգացւում: Ինոչ լուսւթիւնը, որը փոքր ինչ մեղմում էին պատերը, լամառ էր, ծանր, ինչպէս ո բճիճ և զարհուրելի. մինչ այն աստիճան զարհուրելի, որ ամենատաք օրերին իսկ հ. Իգնատիոսին սարսուռ էր պատում: Երկար, սառն, գերեզմանի չսփ սսոն և մահու չսփ անբացատրելի, առեղծուած էր աղջկալ լուսւթիւնը: Կարծես հէնց իւր համար տաժանելի էր ալդ լուսւթիւնը և շատ էլ ցանկանում էր մի խօսք արտասանել, բայց մի ինչ որ զօ-

ըեղ և բուլթ բան, մեքենալի պէս, նորան պահում էր անշարժութեան մէջ և լարի պէս ձգում էր կարում էր Եւ մի հեռաւոր անկիւնում, ծալրին, լարը սկսում էր տատանուել և մեղմ, անվստահ և խղճալի ձայն հանել Հ. Իգնատիոսը ուրախութեամբ և երկլւզով էր որսում ալդ կեանք ստացող ձայնը և թևերով բազկաթոռի բազուկներին լենուած, գլուխն առաջ պարզած, սպասում էր թէ ձայնը երբ կհասնէ իրեն։ Բայց ձայնը յանկարծ կտրւում և լուսում էր։

Դատարկ բաներ է, —բարկացած ասում էր Հ. Իգնատիոսը և ենում բազկաթոռից։ Դեռ ևս ուղղաձիգ և բարձրագլուխ։ Լուսամուտից նա տեսնում էր արեւի շողերի մէջ կորած հըապարակը, որ սալարկած էր կլոր, հաւասար քարերով և դիմացն էլ երկար, առանց լուսամուտների, սալլատունը։ Անկիւնում կեցան էր կաւէ արձանի նման կառապանը և անհասկանալի էր՝ թէ ինչո՞ւ է կանգնել ալդտեղ, երբ ամբողջ ժամերով ոչ մի անցորդ չէր երևում։

### III

Ընտանեկան շրջանից գուրս Հ. Իգնատիոսը շատ առիթ ունէր խօսելու, —եկեղեցական սպասաւորների և ծխականների հետ, ծխակատարութեան ժամանակ, և երբեմն էլ ծանօթների մօտ, որտեղ նա պընթերանս էր խողում։ Ծայց երբ տուն էր դառնում, նորան այնպէս էր թւում, թէ ամբողջ օրը լուած է եղել։ Եւ ալդ առաջ էր գալիս նորանից, որ Հ. Իգնատիոսը ոչ ոքի հետ չէր կարող խօսել այն գլխաւոր և իւր համար էական նշանակութիւն ունեցող բանի մասին, որի վրայ ամեն գիշեր գլուխ էր պատռում։ Ինչի՞ց մեռաւ Վէրան։

Հ. Իգնատիոսը չէր կամենում ըմբռնել, որ այժմ ալլ ևս ալդ բանն իմանալ անկարելի է և կարծում էր, թէ դեռ ևս հնարաւոր է։ Իւրաքանչիւր գիշեր, —այժմ ալդ գիշերներն արդէն ընդ միշտ անքուն էին գարձել նորա համար, —երեւակալում էր այն բողէն, երբ ինքն ու երիցուհին, ուշ՝ կէս գիշերին, կանգնած Վէրալի մահճակալի մօտ, խնդրում էր նորան՝ «Ասա, պատմիր»։

Եւ երբ լիշտութեան թելը հասնում էր մինչ ալդ բառը, այնուհետև մնացեալն ալլ ևս չեր պատկերանում այնպէս, ինչպէս եղել էր: Նորա գոյց աչքերը, որ անցեալի մթութեան մէջ գեռ ևս պահպանել էին այն գիշերուայ կենդանի, անազօտ պատկերը, տեսնում էին թէ ինչպէս Վէրան ելնում-նստում էր անկողնում, ժըստում և խօսում էր... Բայց բնչ էր պատմում: Եւ Վէրալի այդ չարտայալտած խօսքը, որ ամեն ինչ պիտի պարզէր, մինչ այն աստիճան արտասուելու մօտ էր, որ եթէ ականջը մի փոքր թեքէր և սրտի բարախումը կարելի լինէր կանգնեցնել, ապա, կարծես, կարող կլինէր լսել, բայց միևնոյն ժամանակ և ալդ խօսքն այն հեռու, լուսահատութիւն բերելու չափ հեռուից էր շշնչում: Հ. Իգնատիոսը ելնում էր անկողնից, ծալած ձեռները դէպի առաջ էր պարզում և թափահարելով բացականչում.

— Վէրա...

Եւ պատասխանը միայն լրութիւն էր:

Մի անգամ երեկոյեան հ. Իգնատիոսը գնաց այն սենեակը, ուր ամուսինն էր լինում և որի մօտ արդէն մօտ մի շաբաթ էր ինչ չէր եղել, նստեց նորա սնարի կշտին և, խուսափելով նորա լամառ, ծանր հայեացքից, ասաց:

— Տիրուհի, կամենում եմ Վէրալի մասին խօսել հետք: Լսում ես:

Աչքերը լուռ էին: Եւ հ. Իգնատիոսը ձայնը բարձրացնելով, խօսեց հրամալողական և խստութեամբ, այնպէս ինչպէս խօսում էր խոստովանողների հետ.

— Գիտեմ, որ մտածում ես, իբրև թէ ես եմ եղել Վէրալի մահուան պատճառը: Բայց մի մտածիր. մբթէ քեզնից աւելի պակսս էի սիրում նորան: Օտարութիւն կերպով ես մտածում... Ես խիստ էի, բայց մբթէ դա արգելում էր նորան իւր կամեցածն անել: Աըհամտըհեցի հայրական արժանապատութիւնս, խոնարհութեամբ ճկեցի վիզս, երբ նա առանց երկիւղ կրելու իմ անէծքից, ելաւ գնաց... այնտեղ: Իսկ դու, դու չէքը որ խնդրում էիր նորան մնալ, և չէքը լաց լինում, պառաւ, մինչև որ չհրամայեցի լռել: Մբթէ ես ծնեցի

նորան ալդչափ քարսիրտ։ Զէք լիշեցնում անդադար Աստուծոյ, խոնարհութեան, սիրոյ մասին։

Հ. Իգնատիոսը շտապով նայեց ամուսնու աչքերին և երեսը զուռ տուեց։

— Ի՞նչ կարող էի անել նորան, երբ սիրտը չէր բաց անում, ցաւը լալտնում։ Հրամալել՝ հրամալել եմ. ինդրել՝ ինդրել եմ։ Ի՞նչ է, քո կարծիքով ծունկ պիտի չոքէի մի աղջկալ կտորի առաջ և լալի պառաւ կը-նոջ նման։ Իսկ ինչ կարող էի իմանալ թէ մտքումն ինչ կար... Բնչ էր մտածում... Դաժան, քարսիրտ աղջիկ։

Հ. Իգնատիոսը բռունցքով ծնկանը զարկեց։

— Սիրոյ կալծ չկար նորանում, — ահա թէ բանը որտեղ էր։ Իմ մասին Բնչ ասեմ, լալտնի է, որ ես... բռնակալ եմ... բայց քեզ հօ սիրում էր։ Քեզ գոնէ, որ լալիս... ստորանում էր։

Հ. Իգնատիոսն անձայն ծիծաղեց։

— Սիրում էր։ Երեսի, Հենց քեզ մխիթարելու համար էլ ալդպիսի մահ ընտրեց։ Դաժան, ամօթալի մահ։ Մեռաւ աւազի, ցեխ ու կեղտի մէջ... ինչպէս մի շշուն, որի դնչին ստքով են զարկում...

Հ. Իգնատիոսի ձայնի ելեէջը ցածրե խռպոտ էր։

— Ամօթից գետինն եմ մտնում։ Փողոց ելնել ամաչում եմ։ Բեմից երեալ ամաչում եմ։ Աստուծոյ առաջ ամաչում եմ։ Դաժան, անարժան աղջիկ... Դերեզ-մանի մէջ իսկ անիծելը քիչ է...»

Երբ Հ. Իգնատիոսը դարձաւ և նայեց ամուսնուն, սա արդէն ընկած էր անզգայ և միայն ուշքի եկաւ մի քանի ժամից լետոյ Եւ երբ ուշքի եկաւ, նորա աչքերը դարձեալ լուռ էին և չէր կարելի հասկանալ թէ լիշում է արդեօք Հ. Իգնատիոսի ասածները՝ թէ ոչ։

Հենց նոյն գիշերը լուլիսեան մի լուսնկալ, խաղող, զերմին և խաղաղ գիշեր էր — Հ. Իգնատիոսը ոտքերի մատների ծալրի վրայ, որպէս զի կինն ու հիւանդապահը ըս լսեն, բարձրացաւ սանդրւխտներով և մտաւ Վէրալի սենեակը։ Միջնաւարկի լուսամուտները Վէրալի մահուանից ի վեր չէին բացուել, ուստի և օդը չոր ու տաք էր, մի քիչ էլ ցերեկուանից տաքացած թիթեղեալ տանիքի հոտով։ Բնակարանը ինչ որ անբնակ և երեսից

Ճգուածի տպաւորութիւն էր թողնում, որտեղ երկար ժամանակ մարդու ոտք չէր կոխել և պատերի տախտակները, կահ-կարասիքը և միւս իրեղէնները անընդհատ քալքալով ընկած էր լուսամուտի և յատակի վրայ և սպիտակ, ամենայն հոգատարութեամբ լուացած տախտակներից անդրադառնալով մթնշաղի լուսով անկիւններն էր լուսաւորում, իսկ ճերմակ, մաքուր մահճակալը, երկու բարձերի հետ, եթերալիին, տեսլական էին թւում։ Հ. Իգնատիոսը բացեց լուսամուտը և թորմ օգը համարձակ հոսանքով ներս խուժեց սենեակը հետը բերելով և փոշու և մօտիկ զետակի և ծաղկող լորենու հոտը. իսկ հեռուից հազիւ-հազ լուսում էր խմբտկան երգի ձախնը, — երեխ մակոյկով զբօսնում և երգում էին։ Բորիկ ոտներով, անձայն քայլերով, սպիտակ ուրուականի նման, հ. Իգնատիոսը մօտեցաւ դատարկ անկողնին, ծունկի եկաւ և երեսն ի վար ընկաւ բարձերի վրայ գրկեց, — այնտեղը, որտեղ պէտք է գտնուէր Վէրալի դէմքը։ Երկար ժամանակ ընկած էր այդպէս։ Հեռուից լսուող երգն աւելի բարձրացաւ և լետոյ լոեց, իսկ նա դեռ ևս ընկած էր անշարժ և երկար, ու մազերը փըռուել-տարածուել էին ուսերի և անկողնի վրայ։

Լուսինը շուռ եկաւ և սենեակի մէջ աւելի թանձը էր խաւար տիրել, երբ հ. Իգնատիոսը գլուխը բարձրացրեց և շշնչաց, որի մէջ երկար ժամանակ թագցրած, երկար ժամանակ շարտայտառուղ սիրոյ ձախներն էին լսում, և ինքն ականջ դնելով իւր ձախնին այնպէս, որ կարծես լսողը ոչ թէ ինքն էր, այլ Վէրան։

— Անդին աղջիկս, Վէրա։ Զգնւմ ես, թէ ինչ է նշանակում — աղջիկս։ Սիրուն զաւակս։ Իմ սրտի հստոր և իմ արիւն, և իմ կեանք... Քո ծերունի... Ծերուկ հալրդ, արգէն ալեզարդ, ուժից ընկած, թուլացած... Հ.

Իգնատիոսի ուսերը թոթւում էին և նորա ամբողջ հսկայական իրանը շարժւում էր։ Զսպելով սարսուը, հ. Իգնատիոսը քնքշութեամբ, կարծես, փոքրիկ մանկան էր շշնչում։

— Ծերուկ հալրդ... խնդրում է քեզ։ Ո՛չ, Վէրա, ազերսում է։ Լալիս է։ Բայց նա երբէք լաց չէ եղել։ Քո

վիշտը, անգին զաւակս, քո տանջանքը,—իմս են: Աւելի, աւելի քան իմս են,

Հ. Իգնատիոսը շարժեց գլուխը:

— Աւելի, Վէրօչկա: Ե՛, ինչ է մնացել ինձ՝ ծերուկիս համար—միտև մահ: Խսկ դու... Ախր եթէ դու իմանալիր, թէ մինչ որ սստիճան քնքոյշ ես ու թոյլ, և երկչոտ: Ցիշում ես, երբ մի անգամ մատղ ծակեցիր և արիւն կտթեց, և դու լաց եղար: Իմ անգին զաւակս Զէ որ դու էլ ինձ ես սիրում, սստիկ ես սիրում, գիտեմ: Ամեն առաւօտ ձեռքս ես համբուրում: Ասա, պատմիր, ինչն է տանջում քո գլուխը և ես,—ահա այս ձեռքերովս, — կիսեղդեմ քո վիշտը: Այս ձեռքերի մէջ, Վէրա, դեռ շատ ոլժ կայ:

Հ. Իգնատիոսի մազերը թոթուեցան:

— Ասա:

Հ. Իգնատիոսը աչքերը լառեց պատին և ձեռները մեկնեց:

— Ասա:

Սենեակում անդորրութիւն էր տիրում, իսկ հեռուից, շատ հեռուից լսում էր գնացքի շարունակ և ընդհատ սուլոցը:

Հ. Իգնատիոսը լայնացած բքերով աչքերը չորս կողմը լածելով, կարծես նորա առաջ պատկերացած լինէր ալլանդակուած դիակի զարհութելի ուրուականը, զանդաղ ելաւ չոքած տեղից և մտամոլոր շարժումով դէպի գլուխը տարաւ լայն բաց արած և զղաձգաբար ուղղած մատները: Մի քիչ դէպի դուռը յետ քաշուելով, Հ. Իգնատիոսը անզուսպ թափով ցնջաց.

— Ասա... .

Եւ պատասխանը միայն լռութիւնն էր:

#### IV

ՆետԱեալ | օրը Հ. Իգնատիոսը սովորականից վաղ մենմիալնակ ճաշելուց լետոյ գնաց գերեզմանատուն—աղջկա մահից լետոյ ալս առաջին ալցն էր: Տօթ էր, խաղաղ և ոչ ոք չկար, խաղաղ էր մինչ ալն աստիճան, որ կարծէք ալս տօթ օրը միայն լուսաւորուած գիշեր

լինէր. իւր սովորութեան համաձայն հ. Իգնատիոսը ամենալն հօգատարութեամբ շտկեց մէջքը, խիստ հայեցք ձգեց չորս կողմը և ալնպէս էր մտածում թէ դարձեալ առաջուանն է. նա չէր նկատում ոչ նոր զգացուող ոտների սաստիկ թուլութիւնը, ոչ էլ այն, որ իւր երկար մօրուսը բոլորովին ճերմակել էր, կարծես, սաստիկ ցուրաը գարկել սպիտակ եղեամն էր կապել նորա վըլալ. Գերեզմանատուն տանող ուղին ձգւում էր երկալն, ուղիղ փողոցով, թեթևակի վեր բարձրանալով, որի ծալրին սպիտակին էր տալիս գերեզմանատան դարբասի կամարը, որ ու, մշտաբաց, սպիտակ տամներով շրջապատուած աշուելի բերանի էր նմանում:

Վէրալի գերեզմանը գտնւում էր գերեզմանատան խորքում, այնտեղ ուր վերջանում էին աւազով փռուած նրբուղիները և հ. Իգնատիոսը երկար ժամանակ թափառում էր նեղիկ. ծուռ ու մուռ գծերով՝ կանաչով պատած, ամենքից մոռացուած և երեսի վրալ ձգուած փոքրիկ դամբարան բլրակների ծալրերը լիզող անցնող կածանների մէջ։ Տեղ-տեղ պատահում էին մի կողմ թեքուած, ժամանակի երեսից կանաչաւուն գոյն ստացած լուշարձաններ, ջարգուած վանդսկապատներ և մեծ, գետնի մէջ պինդ մեխուած, ծանրանիստ գերեզմանաքարեր, որ մի առանձին, ծերութեան լատուկ, քինախնդրութեամբ ճնշում էին իրենց բռնած տեղերը։ Ալդպիսի գերեզմանաքարերից մէկին էր փարուած Վէրալի գերեզմանը։ Նա ծածկուած էր նոր, գեղնած խարձով. իսկ ջուրը կանաչապատ էր։ Աքիլեակն ու թղկին վերեսում իրար էին խառնել իրենց ճիւղերն ու իրար փարուել, իսկ տկողնու լայնատարրած թուփը փռել-տարածել էր գերեզմանի վրալ իւր ճկուն, բայց կոշտաւուն և թաւ տերևներով ծածկուած, ճիւղերը նստելով հարսան գերեզմանի վրալ և մի փոքր շունչ առնելով, հ. Իգնատիոսը աչքերը չորս բոլորը դարձրեց, մի հայեացք ձգեց անամպ, դատարկ երկնքի վրալ, ուր բոլորովին անշարժ կեցած էր հրաշէկ արևը, —և միայն ալդ ժամանակ զգաց այն խորին, ոչ մի քանի հետ չհամեմատուող, գերեզմանատաներում թագաւորող անդորրութիւնը, երբ քամու շունչ չկայ և մեռած տերևների շշուկ

չէ լուռում: Եւ նորից հ. Իգնատիոսին տիրեց այն միտքը, թէ սա անդորրութիւն չէ, ալլ լուռթիւն: Ալդ լուռթիւնը տարածուում, հասնում էր մինչև աղիւսէ պատերը, ծանր-ծանր սահում անցնում էր նորա վրալից և ողողում քաղաքը: Խոկ ալդ լուռթեան ծալըն ալնտեղ՝ այն գարշաւուն, լամառութեամբ և լարատև լուսդ աչքերի մէջ էր կենտրոնացած:

Հ. Իգնատիոսը թոթուեց սարսուու պատաժ ուսերը և աչքերը ներքեւ՝ Վէրալի գերեզմանին ձգեց: Երկար նայում էր խոտի գեղնած, կարճլիկ ցողուններին, հողախառն պոկուած էր ով գիտէ որ քամիների ենթակայ դաշտից և որ գեռ ևս չէր կարողացել օտար հողի հետ մերուել—միտնալ, — նայում և չէր կարողանում երեակալել, որ այնտեղ, ալդ խոտի տակ, մի երկու արշին տարածութեան տակ՝ պտոկած է իւր Վէրան: Եւ ալդ մերձաւորութիւնը անըմբռնելի էր թւում նորան և իւր հոգու մէջ : Փոթութիւն ու օտարօտի մտորանք էր սերմանում: Նա, որի մասին հ. Իգնատիոսը սովորել էր մտածել, իրեւ անհունութեան խաւար ծոցում լաւիտեան կորածի մասին, գտնուում էր այստեղ, շատ մօտ... և անհնար էր թւում մտածել, թէ նա այնուամենայնիւ չկայ և երբէք էլ գոյութիւն չի ունենալու: Եւ հ. Իգնատիոսին թուում էր, որ եթէ որ և է բառ արտասանէ, որ զգում էր թէ համարեա իւր լեզուի ծայրին էր և կամ եթէ որ և է շարժում անէ՝ Վէրան դուրս կդայ գերեզմանից և իւր առաջ կկանգնէ, նոյնչափ գեղեցիկ, բարձրահասակ, ինչպէս էր: Եւ ոչ միալն մենակ նա լարութիւն կառնէ, ալլ և բոլոր մեռելները, որոնք այնքան զգալ են տալիս իրենց ներկալութիւնը իրենց հանդիսաւոր սառն լուռթեամբ:

Հ. Իգնատիոսն առաւ իւր լալնեղը սև գլխարկը, լարդարեց ալեծածան մազերը և շշնչալով ասաց:

—Վէրա:

Այն զգացումը թէ կօղմնակի մէկը կարող էր լսել իրեն, անյարմար դրութեան մէջ դրեց հ. Իգնատիոսին, ուստի կանգնելով գերեզմանի վրալ սկսեց դիտել խաչերի վրալից: Ոչ ոք չկար, ուստի և աւելի բարձրաձայն կրկնեց.

—Վէրա:

Հ. Իգնատիոսի սովորական ձուլնն էր այս անդամ չոր և պահանջող. և դարմանալի էր, որ ալդայիսի ուժով արտալայտուած պահանջը անպատասխան էր մնում:

—Վէրա:

Բարձրածայն և լարատես հաստատակամութեամբ էր հնչում այդ ձայնը և երբ առ ըսպէ դադարում էր, կործէք թւում էր ըսպէտպէս, թէ այնտեղ՝ ներքեւ տնորոշ պատասխուն էր լսում: Եւ հ. Իգնատիոսը, մի անգամ ևս չորս կողմը դիտելուց լետոյ, մազերը տկանջից հեռացնելով, ընկաւ կոշտ, չոր խոտի վրայ և տկանջը մօտեցրեց խարձին:

—Վէրա, ասա:

Եւ հ. Իգնատիոսը սարսուռով զգաց, որ իւր ականջի մէջ է հոսում մտնում ինչ որ գերեզմանական պաղութիւն և ստուցնում իւր ուղեղը, և որ Վէրան խօսում է, — բայց խօսում էր նոյն անվերջ լուռութեամբ: Աւելի ու աւելի զարհուրելի և տագնապալի էր դառնում այդ լուռութիւնը և երբ հ. Իգնատիոսը զօռով բարձրացնում, հեռացնում է մեռելի պէս դալկացած գլուխը գետնից, նորան այնպէս թուաց, որ զըշապատող օգն ամբողջապէս դողում և սարսում է անդրադարձող լուռթիւնից և որ այդ զարհուրելի ծովը բռնուած է տմեհի մըրկով: Լուռութիւնը խեղդում էր նորան. սառն ալիքներով սահում-անցնում է նորա գլխի վրայով և մազերը փշաքաղում. զարկում փշրում է իւր կրծքին, որ հծծում էր հարուածների տակ: Դողալով ամբողջ մարմնով, չորս կողմը սուր և վալրկենական հալեացքներ ձգելով, հ. Իգնատիոսը դանդաղօրէն բարձրանում է և երկար, տանջող ճիգ թափելով աշխատում էր ուղել մէջքը և դողացող մարմնին հպարտ կեցուածք տալ: Եւ լաջողում է: Դիտաւորեալ դանդաղկոտութեամբ հ. Իգնատիոսը թափ է տալիս ծնկները, գլխարկը գնում, երեք անգամ խաչակնքում գերեզմանը և հեռանում հանգարտ, ամուր քալուածքով, բայց ծանօթ գերեզմանատունը չէ ճանաչում և ուղին կորցնում:

—Ճանապարհը շփոթել եմ, — քմծիծաղ է տալիս

Հ. Իգնատիոսը և կանգ առնում ճիւղաւորուող կածանի առաջ:

Բայց կանգ է առնում միայն մի վայրկեան և, առանց մտածելու, շուր է տալիս դէպի ձախ, որովհետեւ սպասել ու կանգնել՝ չի կարելի: Լոռութիւնը հալածում է: Խալարութիւն է առնում կանաչաւուն գերեզմաններից: Նորանով են ջնջում մուալլ, գորշագոյն խաչերը. բարակ, խեղջող հոսանքներով դուրս է թափուու դիակներով լզիացած գետնի ամեն մի ծակոտից: Հ. Իգնատիոսի քալլերն աւելի ու աւելի արագանում են: Գլուխը կորցրած, պառութ էր գալիս միեւնոյն ուղիներով, թռչկոտում էր գերեզմանների վրայով, լանկարծակի վանդապատներին էր զարկւում, ձեռներով բռնում սուր, ձուատող թիժեղեալ պսակները և վրայի նուրբ վերարկուն ծուէն-ծուէն անում: Միայն մի միտք դեռ ևս մնացել է գլխումը՝ դուրս գալ, ազատուիլ ալդ տեղից: Այս կողմից այն կողմն է ընկնում և, վերջապէս, աշխատելով ձայն չհանել, վազում է իւր ամբողջ բարձր հասակով, տարօրինակ, օդի մէջ ծածանող վերարկուով և ցիրուցան, ալեծածան մազերով: Նոյն իսկ գերեզմանից ելած մեռածից ալնքան չէր վախենալ հանդիպող մարդը, որքան կվախենար ալս առանց առաջը նայելու վախող, ցատկուող և թևերը թափահարող զարհուրելի կերպարանք ստացած անձնաւորութեանը, տեսնելով նորածուած, խելագարի դէմքը, լսելով լայն բաց արածքերնից ելնող խուլ խրխուցը:

Հ. Իգնատիոսը ամենայն թափով դուրս եկաւ այն փոքրիկ հրապարակը, որի ծալրին սպիտակին էր տալիս գերեզմանատան ցածլիկ եկեղեցին: Նախագաւթում ցածլիկ նստարանի վրայ ննջում էր մի ծերուկ, որ արտաքինից հեռու տեղից եկած ուխտաւոր էր երեւում և նորամօտ իրար վրայ լարձակուելով, վիճում և հալհոյում էին միմեանց երկու մուրացիկ-պառաւ:

Երբ Հ. Իգնատիոսը մօտեցաւ իրենց տանը, արդէն մթնել էր և երիցուհու սենեակում ճրագ էր վառուած: Առանց վրայի հագուստը հանելու և գլխարկը գլխին, փոշու մէջ կորած և գգգուած և պատուած, Հ. Իգնատիոսը արագ մօտեցաւ կնոջն ու չոքեց:

—Տիրուհի... Օլիա... խղճա ինձ,—հեկեկում էր նա:—Խելագարում եմ... ես:

Եւ գլուխը սեղանի ծալրին զարկելով, հեկեկում էր անզուսպ, սիրտ կարտելու չափ անզուսպ, ինչպէս մի մարդ, որը երբէք լաց չէր եղել: Եւ նա բարձրացրեց գլուխը, միանդամայն հաւատացած, որ այս ըստ պէիս հրաշք կկատարուի, և իւր կինը կիսուէ և կը խղճալ իրեն:

—Հոգեակ, անուշ-ջան:

Իւր ամբողջ հսկայական մտրմնով ձգուեցաւ դէպի ամուսինը,—և հանդիպեց գորշագոյն աչքերի հալեացքին: Այնտեղ ոչ խղճալու և ոչ բարկութեան արժայալտութիւն էր երևում: Գուցէ կինը և՛ ներում, և՛ իրդում էր նորան, բայց աչքերի մէջ չէր կարդացւում ոչ արգահատանք և ոչ ներողմտութիւն: Համը ու լուռ էին ալդ աչքերը:

Եւ մուժ, ամայացած տունն ամբողջապէս լուռ էր:

Տ. Վ.

